ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԵՆԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

« 10» ապրիլի 2015թ.

ՀՀ Լոռու մարզպետ
Ա. Նալբանդյանին

Կից Ձեզ ենք ներկայացնում Շենավան համայնքի ղեկավարի թիվ 4 որոշումը և թիվ 3,4 կարգադրությունները:

Համայնքի ղեկավար՝ Գ.Դունամալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 4

«20» ապրիլի 2015 թ. Շենավան համայնք

Լոռու մարզի Շենավան համայնքում շտաբային
ուսումնավարժության անցկացման մասին

Ի կատարումն Լոռու մարզպետի կողմից հաստատված «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2015 թվականի հիմնական միջոցառումների պլան»-ի ս/թ մայիսի 7-ին իմ ղեկավարությամբ Լոռու մարզի Շենավան համայնքում անց է կացվելու շտաբային ուսումնավարժություն «Ջրհեղեղների, հեղեղումների և սելավների դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպում և հետևանքների վերացում» թեմայով:

Ուսումնավարժության կազմակերպման և արդյունավետ անցկացման նպատակով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Նշանակել՝

1.1. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ Ս.Հայրապետյանին:Շտաբը կազմավորել համայնքի ծառայությունների բազայի վրա:

2. Ուսումնավարժությունում ընդգրկել համայնքային կապի և ազդարարման, ինժեներական, բժշկական, տրանսպորտային, առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման միասնական, բույսերի և կենդանիների պաշտպանության, հասարակական կարգի պահպանման, բնակչության հատուկ սպասարկումների, կոմունալ-տեխնիկական, էներգետիկայի և լուսաքողարկման, գազասպասարկման ծառայություններին:

3. ՔՊ շտաբի պետին.

- մշակել և մինչև մայիսի 4-ը իմ հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման փաստաթղթերը և ապահովել պլանով նշված միջոցառումների սահմանված ժամկետներում կատարումը.
- ուսումնասիրել և ճշգրտել «Շենավան համայնքի 2015 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանը» և դրանց իրականացման մեխանիզմը.
- Համայնքային ծառայությունների ու կազմավորումների ղեկավարների հետ անցկացնել տեսական պարապմունքներ, շտաբային վարժանքներ.
- ուսումնավարժության անցկացման ընթացքում ապահովել իրավիճակի մասին տեղեկությունների ժամանակին ընդունումը, ամփոփումը, գնահատումն ու շահագրգիռ մարմիններին հասցնումը.
- նախապատրաստել ղեկավարման կետը:
- ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին ինձ զեկուցել մինչև մայիսի 5-ը:

4. Համայնքային ծառայությունների պետերին.

1) ուսումնասիրել և ճշգրտել ծառայությունների պլաններն ու խնդիրները: Ակտիվորեն համագործակցել ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ.

2) Կապի և ազդարարման ծառայության պետ Գալյա Դունամալյանին՝ ապահովել կայուն և անխափան կապ ծառայությունների ու արձագանքող ուժերի հետ:

3) Տրանսպորտային ծառայությայն պետ Իգիթ Աբրահամյանին՝ պատրաստ վիճակի բերել առկա տրանսպորտային միջոցները՝ ջրհեղեղների, հեղեղումների և սելավների դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպման և հետևանքների վերացման նպատակով.

4) Բժշկական ծառայության պետ Լենա Կարապետյանին՝ ճշգրտել ծառայության խնդիրներն ու դրանց լուծման կարգը.

5) Բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայության պետ՝Ռազմիկ Արշակյանին ճշգրտել ծառայության խնդիրները՝ ջրհեղեղների, հեղեղումների և սելավների դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպման և հետևանքների վերացման նպատակով.

6) էներգետիկայի և լուսաքողարկման ծառայության պետ Նահապետ Պալյանին՝ ճշգրտել ծառայության խնդիրներն ու դրանց լուծման կարգը.

7) Գազասպասարկման ծառայության պետ Պարույր Կարապետյանին՝ ճշգրտել ծառայության խնդիրներն ու դրանց լուծման կարգը.

8) Հասարակական կարգի պահպանման ծառայության պետ Վահագն Գասպարյանին՝ ջրհեղեղների, հեղեղումների և սելավների դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպման և հետևանքների վերացման նպատակով ճշտել ծառայության խնդիրները, պատրաստ վիճակի բերել ծառայության միջոցները:

9) առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման միասնական, ինժեներական, բնակչության հատուկ սպասարկումների և կոմունալ-տեխնիկական ծառայությունների պետերին՝ ճշգրտել ծառայության խնդիրներն ու դրանց լուծման կարգը:

5. Սույն հրամանը հայտարարել ըստ առնչության.

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.Դունամալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

10 ապրիլի 2015թ.

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ - Ձրիեղեղներից, հեղեղումներից և սելավներից տուժած տարածքներում հետախուզության կազմակերպման և իրականացման վերաբերյալ:

Ս. թ. ապրիլի 4-ից 6-ը Շենավան համայնքում տեղացած հորդառատ անձրևի և ինտենսիվ ձնհալի պատճառով ստեղծվել են արտակարգ իրավիճակներ:

Վնասների, տուժածների և ստեղծված իրավիճակի վերաբերյալ ստույգ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև որոնողափրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների անցկացման նպատակով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ Ս Հայրապետյան՝

- Կատարել տուժած տարածքներում հետախուզություն, առանձնահատուկ ուշադրություն դարձնելով մարդկանց հավանական գտնվելու վայրերի, ինչպես նաև փրկարարական ուժերի մուտքի, երթուղիների մանրամասն հետախուզության վրա.
- կազմակերպել և իրականացնել հետախուզություն համայնքի տարածքում, հավաքել, ընդհանրացնել և մշակել աղետի մասին տեղեկությունները.
- կազմակերպել և անցկացնել հետախուզություն գետի հունի, հակահեղեղային կառույցների և սելավատարների վիճակի գնահատման նպատակով, հնարավոր ջրածածկման գոտիներում կազ-մակերպել հսկողություն.
- իրավիճակի մասին պարբերաբար զեկուցել ինձ.
- ստացված հետախուզական տեղեկատվությունների հիման վրա ճշգրտել համայնքային ծառայությունների գործողությունները.
- հաշվարկել անհրաժեշտ ուժերի և միջոցների քանակը աղետի վայրերի հետախուզման կազմակերպման համար.
- հետախուզության ղեկավարման և աշխատանքների արդյունավետության նպատակով համայնքը բաժանել գոտիների՝ ըստ տուժած տարածքների.
- հետախուզության օղակի կազմը համալրել այն բնակիչներով, որոնք ծանոթ են տեղանքին և նրա առանձնահատկություններին: Յուրաքանչյուր օղակ ապահովել տրանսպորտային միջոցներով:

2. Հետախուզության խմբի ղեկավար Նվերիկ Հայրապետյանին՝

- ապահովել համայնքի ղեկավարի տեղակալի հանձնարարությունների անխտիր կատարումը.
- ճշգրտել աղետի մակերեսը, ինտենսիվ տարածման ուղիները, որոշել հետագա իրավիճակի հետևանքների զարգացումը և անմիջապես տեղեկացնել ղեկավարման շտաբին.
- մանրակրկիտ ուսումնասիրել ճանապարհները, նրանց շրջանցիկ ուղիների առկայությունը և դրանցից օգտվելու հնարավորությունները, ճշտել անվտանգ տեղամասերը և ուսումնասիրել դեպի անվտանգ գոտի տանող ճանապարհների վիճակը.
- հայտնաբերել տուժածներին և ցուցաբերել առաջին բուժօգնություն.
- որոշել բնակչության փրկության, տարահանման ձևերն ու կարգը.
- խստորեն պահպանել անվտանգության կանոնները:

3. Կատարված աշխատանքների մասին երկու ժամը մեկ զեկուցել ինձ:

Համայնքի ղեկավար՝ Գ.Դունամալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

10 ապրիլի 2015թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ - «Ձրհեղեղների, հեղեղումների և սելավների հետևանքների հնարավոր մեղմացման, միջոցառումների կազմակերպման վերաբերյալ»:

Աղետի գոտում ջրհեղեղների, հեղեղումների, սելավների, ինչպես նաև նրանց առաջացրած երկրորդական ազդող գործոնների՝ հետևանքները մեղմացնելու և վերացնելու նպատակով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ Ս Հայրապետյանին

- ճշգրտել «Շենավան համայնքի 2015 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանը».
- առավել վտանգավոր գոտիներում կազմակերպել և անցկացնել փրկարարական անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ (ՓԱՎԱ).
- իրականացնել առկա և անհրաժեշտ ինժեներական տեխնիկայի, ուժերի և միջոցների հաշվարկ, փնտրել լրացուցիչ ուժերի և միջոցների հայթայթման ուղիներ.
- համապատասխան տեխնիկայի միջոցով մաքրել գետի հունը, հակահեղեղային կառույցների և սելավատարների անհրաժեշտ հատվածները, վտանգավոր տեղամասերում ամրացնել ափապաշտպան թմբերը՝ ընդգրկելով համայնքի բնակչությանը.
- կազմակերպել և իրականացնել վտանգավոր տարածքներից անվտանգ տարածք՝ մարդկանց, կենդանիների և նյութական արժեքների ժամանակավոր տեղափոխումը և տեղաբաշխումը.
- միջհամայնքային ճանապարհների հատվածներում կատարել մաքրման աշխատանքներ.
- ուժեղացնել հսկողությունը և դիտարկումները պոտենցիալ վտանգ ներկայացնող տարածքների նկատմամբ, որոնք կարող են սպառնալիք ներկայացնել տրանսպորտային միջոցների անխափան երթևեկությանը.
- ապահովել տուժած բնակչությանը և ՓԱՎԱ կատարող կազմավորումներին սննդամթերքով, ջրով, կացարաններով և տաք հագուստով.
- ջրհեղեղների, հեղեղումների և սելավների պատճառած վնասների չափերը ուսումնասիրելու և գնահատելու համար ստեղծել համապատասխան հանձնաժողով.
- հնարավոր վտանգավոր վայրերում բնակիչների ուժերով կազմակերպել շուրջօրյա շարժական հսկիչ կետեր, սահմանել հերթապահություն՝ վտանգների մասին տեղեկատվությունը ապահովելու համար.
- իրազեկել վտանգավոր գոտում գտնվող բնակչությանը՝ սպառնացող վտանգների, նկուղային հարկերից իրենց ունեցվածքի տեղափոխման անհրաժեշտության, ինչպես նաև նման դեպքերում բնակչության վարվելակերպի կանոնների մասին.
- իրականացնել առավել վտանգավոր տարածքներից անվտանգ տարածքներ բնակչության տարահանման և կենսաապահովման միջոցառումներ:

1.Համայնքային ծառայությունների պետերին՝

- Բժշկական ծառայության պետ Լենա Կարապետյան՝ իրականացնել տուժածների առաջին բուժօգնության ցուցաբերում, ապահովել տուժածների անհապաղ տեղափոխումը հիվանդանոցներ կամ այլ բուժհաստատություններ.
- Հասարակական կարգի պահպանության ծառայության պետ Վահագն Գասպարյան՝ օժանդակել ՓԱՎԱ իրականացնող աշխատանքներին, ապահովել կազմավորումների մեքենաների ազատ մուտքը դեպի տուժած բնակավայրեր վտանգավոր գոտում կազմակերպել շուրջօրյա և ուժեղացված հերթապահություն.
- Էներգետիկայի և լուսաքողարկման ծառայության պետ Նահապետ Պալյան՝ գիշերային ժամերին փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքները շարունակելու համար ապահովել համապատասխան լուսավորվածությամբ, առաջնահերթ վերականգնել էներգամատակարարումը տուժած տներում.
- Կապի և ազդարարման ծառայության պետ Գայյա Դունամալյան՝ ապահովել մշտական կապը ՓԱՎԱ իրականացնող ուժերի հետ:

3. Կատարված աշխատանքների մասին երկու ժամը մեկ զեկուցել ինձ:

Համայնքի ղեկավար՝ Գ.Դունամալյան